արտադրութիւններին։ Սպերի, Թորդումի, Կիսկիմի, Նարիմանի, Օլթիի, Արդանուչի, Օքրոբագետի, Սաթլելի, Արդվինի, Մաճիխելի կտաւ, շալ եւ մետաքս գործող, չիլա ու կապոյտ ներկող, մանուսա, գեղի, գոգնոց, ջեջիմ, կապերտ եւ խալի գործող, չիթ դահող, ծաղիկ բանող, պղնձագործ, դարբին, պայտառ, դերձակ, խաղախորդ եւ մաշկակար վարպետները իսլամ բնակալների ամենաղաժան իշխանութեան շրջանումն անգամ անդորր եւ հասոյթաբեր կեանք են ունեցել եւ տասն անգամ աւելի առատութեան մէջ էին եղել, քանի դեռ չէին տարածուած մեքենական աշխարհի արտադրած գործուածքները։

Ամբողջ հազար տարի արհեստաւորը Իսլամի իշխանութեան մէջ աւելի լաւ վիճակ է ունեցել, քան թէ ԺԹ-րդ դարում, երբ տեղական տնայնագործական արտադրութիւնները դուրս էին մղւում շուկայից եւրոպական մեքենական արտադրութիւնների միջոցով։ Օսմանեան իշխանութեան սկզբնական շրջանից 1300—1800 տարիներին հարիւր հազար ենիչէրիների, սպայիների, պաշտօնակալների եւ ժողովրդի երկրամշակ դասի հագուստը, կապուստը, կահաւորութիւնը, ձիերի սարքը, ուտելիքը, խմելիքը, բնակարանները, տաճարները-մզկիթները, ճանապարհներն ու կամուրջները չինել են հպատակ քրիստոնեաները-բայաները։ Հայ